



2019թ. հունվարին մեկնարկել է «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ կողմից իրականացվող «Հայաստանի համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ծրագրը, որն իրականացվում է Եվրոպական Միության ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ծրագրի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում:

«Հայաստանի համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ազորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա:

«Հայաստանի համայնքային համախմբման և աջակցության կենտրոն»

նպաստել ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և ընտանիքների սոցիալական խնդիրների վերհանման և դրանց լուծմանն ուղղված մեխանիզմների բարելավմանը, մշակելով բարելավման առաջարկություններ:

Ծրագիրն իր առջև խնդիր է դրել՝

- Վերհանել ՍԱՏԳ-ների (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ) և սոցիալական պաշտպանության այլ պետական գերատեսչությունների կողմից կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և ընտանիքներին տրամադրվող ծառայություններում առկա բացերը,
- Վերհանել առկա գործիքակազմերի և իրական հնարավորությունների համապատասխանությունը, չափել քաղաքացիների իրազեկվածությունը, և ներգրավածության աստիճանը ՍԱՏԳ-ի կողմից դեպքի վարման և խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներում, մասնակցային մեթոդով նպաստել, ՍԱՏԳ-ների կողմից կիրառվող մեխանիզմների բարելավմանը:
 - Տեղական պիլոտի հաջողված դեպքերի հիման վրա մշակել առաջարկությունների վերջնական փաթեթ և ներկայացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
 - Ներգրավել շահագրգիռ կողմերին սոցիալական խնդիրների վերհանման և դրանց լուծմանն ուղղված մեխանիզմների բարելավման պրոցեսին՝ ստեղծելով «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանության ցանց» կալիֆիան:

Ծրագրի ընդհանուր տևողությունը 6 ամիս է՝ 2019թ. հունվար-հունիս ամիսները:

Ծրագրի իրականացման աշխարհագրությունն է ՀՀ Լոռու (Ալավերդի), Տավուշի (Դիլիջան), Գեղարքունիքի (Սևան) և Կոտայքի (Հրազդան) մարզերը:

Ծնագրի ղեկավար՝ Օլեգ Դուլգարյան

Ծրագրի համակարգող՝ Հուսիկ Մարտիրոսյան